Դաս 31. Մեծ Միեր

Միհրի՝ արևի ապրծո պաշտամունքը իր ժամանակին լայնորեն տարածված էր Արևելքի բազմաթիվ երկրներում և Հայաստանում (նրան էր նվիրված Գառնիի հեթանոսական տաճարը): Ենթադրվում էր, որ «առյուծաձև» մակդիրն իր իմաստով ևս սերտորեն կապված է Միեր բառի իմաստի հետ. «Եվ որովհետև Միեր–Միհրն արեգակն է, ուրեմն Առյուծ Միերը նույն ինքը՝ Առյուծ–Արևն է: Հայ ժողովրդի մի հավատալիքի համաձայն՝ «արևն արշավում է հեծած մի առյուծ, որը մի մեծ սուր ձեռքին՝ նրան պաշտպանում է չար ոգիներից: Հենց նույն այս Առյուծ–Հրի կամ Առյուծ–Արևի հավատալիքի արձագանքը կարող է լինել մեր ժողովրդական վեպի Առյուծաձև ածականը կամ Միերի Առյուծ մակդիրը: